

ւոր քրոջն օգնելու պարտականութիւնը և լաւ զգան, թէ որչափ ծանր է և ստիպողական այստեղ պահանջը: Միթէ աւելի բարւոք չէր լինի նպաստել Պարսկահայոց եկեղեցական-կրթական դործին, քան անարժան երեցփոխաններին աւար դարձնել եկեղեցական դրամները: Հրաւիրում ենք այս բանի վերայ իշխանութեան հետ և ձեռնհաս անձանց լուրջ ուշադրութիւնը: Ժամանակը մեզ չի սպասում. բաւական պէտք է համարենք եղած փորձերը և շտապենք խելացի և բեղմնաւոր հիմունքների վերայ դնել դործը:

Ե. ծ. վ. Մ.

Ս. ԳՐՈՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ.

Այժմ շուտ շուտ է արժարժվում ս. Գրոց նոր տպագրութեան խնդիրը: Իսկ խնդիրն աւելի բարդ կերպարանք ունի, քան թուում է: Ոմանք ժողովրդեան որոշ կարիքներն աչքի առաջ ունենալով, պահանջում են ս. Գրոց աշխարհաբար թարգմանութեան տպագրութիւնը. իսկ ոմանք ազգային պատուի նախանձախնդիր լինելով, հարկաւոր են համարում՝ ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագիրների բարեխիղճ համեմատութիւններով ձոխացած՝ նախնեաց անեղծ և անարատ թարգմանութեան լոյս ընծայելը:

Աշխարհաբար թարգմանութիւնն առաւելապէս զրահանական խնդիր համարելով, իսկ նախնեաց թարգմանութեան համեմատական տպագրութիւնը բուն եկեղեցական՝ միանդամայն և զիտութեան խնդիր ճանաչելով, տարակոյս չկայ, որ դոքա այնքան հասունացել են, որ այլ ևս անտեղի կլինի յետաձգել դոքա լուծումը: Հետեւապէս ոչ մի զոհողութիւն չպէտք է խնայել, որ այդ դործերը օր առաջ ձեռնարկուին: Մինչև անգամ այդ երկուսի մէջ առաջնութեան խնդիր

Ծան. 2000 երեսից սխալ է պէտք է լինէր 1100:

չպէտք է լինի, վասն զի մեր կրօնական ինքնագիտակցութեան և դարգացման համար երկուսն էլ համահաւասար կերպով կարեւոր են: Աւրեմն ցանկալի է, որ հեղինակաւոր կողմից օրհնութի և երկու գործն էլ սկսուի անյապաղ, որ վաղուց արդէն պէտք է սկսուել էին: Ինչ և իցէ, ոչինչ պատճառ չկայ, որ այնքան ժամանակ բարձի թողի արածը, այժմ ևս անփոյթ թողնուի:

Սակայն երբ էլ որ ձեռնամուխ լինինք, կասկած չկայ, որ այդ գործերի կատարումը շատ երկար պիտի տևի. տարիներ, և ո՛վ գիտէ, թէ քանի տարիներ մենք դարձեալ ակնդէտ պիտի մնանք, մինչև որ աւարտած գործերը մեր ձեռքերումն ունենանք: Վասն զի ամէն բան պէտք է նոր պատրաստուի, հարկաւոր է մեծ հմտութիւն և աշխատանք, չպէտք է շտապել և յափշտակուիլ, այլ աչալըջութեամբ կշռել բոլոր ծանրութիւնը: Իսկ մինչև այն երանելի օրը, երբ որ այդպէս կատարուած գործեր կունենանք, միթէ էլ ուրիշ ոչինչ անելու բան չունինք:

Անշուշտ ունինք, և այս բանի վերայ դարձնում ենք ընթերցողի ուշադրութիւնը:

Երևի ընթերցողին յայտնի է, որ հոգելոյս Ներսէս պատրիարքը ընդհանրական ընկերութեան գիմել էր, որ սա մեր նախնեաց ս. Գրոց թարգմանութիւնը տպագրէր և էթանագին տարածէր: Եւ որովհետև չին Կտակարանի հայերէն թարգմանութիւնը երբայական բնագրից չի թարգմանուել, այլ յունարէն թարգմանութիւնից, իսկ միւս կողմից՝ ընկերութեան կանոնն է, որ թարգմանութիւնները ի լոյս ընծայեն ս. Գրոց բնագրի լեզուներից, — ուստի ընկերութիւնը առաջարկեց այս գծուարութիւնը բառնալ: «Մերայինների նշանաւորները» խորհուրդ անելով, գտան հետևեալ հնարը. հայերէն թարգմանութիւնը համեմատել երբայականի հետ, տարբերութիւնները նշանակել ստորև ծանօթութիւններում, իսկ հայերէնը պահել, ինչպէս որ է: Ընկերութիւնն այս պայմանն ընդունեց, իսկ այնուհետև հայերից յատուկ ժողով կազմուեցաւ այս գործը կատարելու համար:

Ահա այսպէս ի լոյս ընծայեցաւ 1895 թ. ին Կոստանդ-

նուպոլսում «Աստուածաշունչ մատենն Հին և Նոր կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոս, համեմատութեամբ երբայական և յունական բնագրաց»:

Չարմանալի կերպով ռուսահայոց հրապարակասուութեան մէջ այս գործը և երեկյի եղելութիւնը չնշմարուեցաւ: Բայց որպէս զի անձանթները փոքր ինչ զաղափար կազմեն, թէ բանական հայն այդ գործով ինչ գիւտ է ստացել, մի երկու օրինակով տեսնենք, թէ ինչպիսի անհասկանալի բռնութիւն, նախադասութիւններ և ամբողջ գլուխներ այժմ հասկանալի են դառնում ընթերցողին:

Վեր առնենք նախ մի մի նախադասութիւններ Սաղմոսից.

Հայերէն բարգւ.

Եբրայերէն բնագիր.

Յիշեալ Տէր, զԴաւիթ, և զամենայն հեգուրիւն նորա:

... ցեղուրիւն նորա:

Վասն Դաւթի սիրելոյ քո:

... ծառայի քո:

Կորեաւ յինչն փախուս իմ:

Կորեաւ յինչն արաւեմ:

Զի բնդերկար եղև պանդըխտութիւն իմ:

Զի ի Մոսոֆ եղև պ. իմ:

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին:

... բերկրութիւն իմ ...

Ի հակառակութիւն և ի նախանձ, առցեն ի նանիր զքաղաքս քո:

Որ խօսին չարիս զքէն, խրոխտան ի նանիր ընդդէմ քո:

Թէ ոչ նախ նուազեցից զքեզ, երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ:

Թէ ոչ բարձրացուցից զերուսաղէմ ի վեր քան զգլուխ ուրախութեան իմոյ:

Զթիկունս իմ հարին մեղաւորք, ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց:

Ի վերայ թիկանց իմոց հերկեցին հերկողք, ընդ երկար արարին զաղօս իւրեանց:

Այժմ վեր առնենք մի ամբողջ գլուխ Յովբից.

Ընդէր զՏէր մոռացան ամբարհաւածք:

Ընդէր յամենակալէն չեն ծածկեալ ժամանակք, և ընդէր որ գիտենն զնա՝ ոչ տեսանեն զաւուրս նորա:

Եւ ամբարիշտք անցին ըստ սահման. զհօտ հանդերձ հովուօր յափշտակեցին:

Զէշ որբոյն վարեցին և զեղն այրւոյն գրաւեցին:

Խոտորեցուցին զտկարս ի ճանապարհէ արդարութեան, առ հասարակ զօղեցուցին զհեղս երկրի, զիպեցան իբրեւ զցիւռս ի վայրի:

Վասն իմ ծախեցին զգործ իւրեանց, քաղցրացաւ նոցա հաց ընդ լիտիս:

Զանդ տհաս որ ոչ իւրեանց էր՝ հնձեցին, տկարք զայդիս ամբարշտաց անհաց և անվարձ գործեցին:

Զմերկս բազումս ննջեցուցին առանց հանդերձից, զգեստս անձանց նոցա զերծին:

Ի ցօղոյ լեւանց տամկանան, քանզի ոչ դոյր նոցա յարկ, արկին զինքեանս ընդ վիմաւ:

Յափշտակեցին զորքն ի ստենէ, և զանկածն տառապեցուցին:

Զմերկն ննջեցուցին առանց հանդերձի տարապարտուց, հատին զհաց քաղցելոց:

Յանձուկս դարանակալ եղեն ի տարապարտուց, զճանապարհս արդարութեան ոչ գիտացին:

Որք ի քաղաքաց և ի տանց իւրեանց զրկեցան, անձինք տղայոց մեծամեծս հեծեցին. և նա այնմ այցելութիւն ընդէր ոչ առնիցէ:

Յերկրի էին նոքա՝ և ոչ ծանեան. զճանապարհս արդարու-

Զսահմանս փոփոխեն, զհօտս յափշտակեն, և արածեն:

Զէշ որբոց վարեն, առնուն ի գրաւ զեղն այրւոյն:

Մոլորեցուցանեն զաղքատս ի ճանապարհէ, ի միասին թաքչին տնանկք երկրի:

Ահա իբրեւ զցիւռս յանապատի ելանեն ի գործ իւրեանց, վազայարոյցք յորս. անապատ տայ նոցա՝ հաց վասն մանկանց:

Հնձեն զանդ որ չէ նոցա, և անիրաւութեամբ կթեն զայդի:

Զմերկն ագուցին առանց հանդերձի, և առանց ծածկութի ի ցրտութեան:

Ի հեղեղաց լեւանց տամկանան, և առանց ապաստանի գիրկս արկանեն վիմաց:

Յափշտակեն զորքն ի ստենէ, և զաղքատին առնուն գրաւ:

Զմերկն շրջեցուցանեն առանց հանդերձի, և քաղցեալք կրեն զորայ:

Ի մէջ որմոց նոցա մղեն ձէթ, հնձանս հարկանեն, և ծարաւին:

Ի քաղաքաց արք հեծեն, և անձն վիրաւորելոց ճչէ, և Աստուած չհամարի անզդամութիւն:

Նոքա են յապստամբաց լուսոյ, ոչ գիտեն զճանապարհս

թեան ոչ գիտացին, և ընդ շա-
ւիղս նորա ոչ գնացին:

Ծանուցեալ զգործս նոցա՝
մատնեաց զնոսա ի խաւար, և
զցայդ եղիցին իբրև զգողս:

Եւ աչք շնացելոյն պահեսցեն
զխաւար, և ասիցէ, թէ ոչ զա-
կանիցէ զիս ակն. և քօղ արկ
զերեսօք իւրովք:

Փորեաց ընդ մութ գտուն իւր,
ի տուէ կնքեցին զանձինս, և ոչ
ծանեան զլոյս:

Եթէ միանգամայն առաւօտ
նոցա ի ստուերս մահու է, եթէ
ի միտ առնուցու զխռովութիւն
ստուերաց մահու:

Թեթեալոյն է ի վերայ ջուր-
ցն երեսաց. կործանեսցի մասն
նոցա ի վերայ երկրի, երևեսցի
տունկ նոցա ի վերայ ցամաք
երկրի:

Զի զանթանոցիկ որքոյն յա-
փըշտակեցին. ընդդէմ յիշա-
տակեցան նմա մեղք, իբրև զմա-
ռախուղ ցօղոյ եղև անյայտ:

Հատուցի նմա որ ինչ արա-
ըն. խորտակեսցի ամենայն ա-
նիրաւ հանդոյն փայտի անբժը-
կականի:

Զի ամլոյն բարի ոչ արար, և
ամուրւոյն ոչ ողորմեցաւ:

Սրտմտութեամբ կործանեաց
զտկարս. և թէպէտ և յարիցէ,
մի՛ հաւատասցէ կենաց իւրոց:

Հիւանդացեալ՝ և մի՛ ակնկալ-
ցի ողջանալոյ, այլ անկցի ախ-
տիւ. զի զբաղումս չարչարեաց
բարձրութիւն նորա:

Նորա, և ոչ կան ի շաւիղս նո-
րա:

Ընդ լուսանալն ելանէ սպա-
նող, սպանանէ զաղքատն և
զանանկ, և ի գիշերի եղիցի
իբրև զգող:

Եւ աչք շնացելոյն սպասեն
խաւարի, և ասէ, թէ ոչ զա-
կանիցէ զիս ակն. և քօղ արկ
զերեսօք իւրովք:

Ական հատանէ ի խաւարի,
զտանց, զոր ի տուրնջեան գի-
տեցին. և ոչ ծանեան զլոյս:

Քանզի առհասարակ այդ
ստուեր մահու է նոցա, զի գի-
տեն զարհաւիրս ստուերի մա-
հու:

Թեթեալոյն է ի վերայ ջուրցն
երեսաց. անիծեալ լիցի մասն
նոցա ի վերայ երկրի, ոչ դառ-
նայ ի ճանապարհ այգեաց:

Յամաքութիւն և տօթ յափըշ-
տակեն զջուրս ձեան, գերեզ-
ման՝ զմեղուցեալս:

Մոռացի զնա ողորմութիւն.
կերիցէ զնա քաղցրութեամբ
որդն, ոչ ևս յիշեսցի, և խոր-
տակեսցի իբրև ծառ անիրաւու-
թիւն:

Յանջէ զամուլն որ ոչ ծնաւ,
և այրւոյ չառնէ բարութիւն:

Չգէ զհզօրս զօրութեամբ իւ-
րով, յառնէ նա և չիք ապա-
հովութիւն կենաց:

Ետ նմա ապահովութիւն, և
վստահ լիցի ի նա, և աչք նո-
րա ի վերայ ճանապարհաց նոցա:

Թարչամեսցի իբրև զբանջար
ի տօթի, կամ իբրև զհասկ
ինքնին անկեալ ի ցօղնոյ:

Ապա թէ իցէ ոք որ ասեցէ
զինէն՝ սուտ խօսել, դիցէ զբա-
նըս իմ յոչինչ:

Բարձրացան սակաւիկ մի, և
եղեն յոչինչ, և խոնարհեցան,
որպէս զամենեւին՝ կորեան, և
իբրև զգլուխ հասկի հատան:

Եթէ չիցէ այսպէս, ո՞վ արաս-
ցէ զիս սուտ, և համարեսցի
ոչինչ զբանս իմ:

Այսքան օրինակն էլ բաւական լինի Պօլսոյ հրատարա-
կութեան արժէքը հասկանալու համար:

Ահա եօթը տարի է, որ այս գիրքը շրջում է հայերի
ձեռքում, և եթէ կարելի է ասել՝ արդէն քաղաքացիացել
է: Թէպէտ գիրքը լոկ գրականական նշանակութիւն ունի,
բայց ի նկատի առնելով, որ մեր թեմական դպրանոցներում
և ձեմարանում արդէն որպէս դասագիրք է գործածվում,
հասկանալի է, թէ ինչ կարևորութիւն է ստացել մեր կեան-
քում: Եւ այլակերպ ևս չէր կարող լինել, քանի որ
մէջ տեղը ներսէս պատրիարք Վարժապետեանի պէս նուի-
րական անձի անուն կայ և գործը գլուխ է եկել բանիրուն
հայերի ժողովով:

Որպէս առաջին փորձ, հարկաւ այս գործը այնպէս
պետք է տպագրուէր, ինչպէս որ լոյս տեսաւ, այսինքն ու-
ղիղ ընթերցանելիքը ստորեւ ծանօթութիւններում: Բայց
եօթը ամբողջ տարիներ փորձուելուց և օգտաւէտ ճա-
նաչուելուց յետոյ, միթէ ժամանակ չէ, որ գործն աւե-
լի ևս ծայրագոյն օրհնութիւն ստանայ և վերջնականապէս
վաւերացուի:

Յառաջադիմութիւնը միայն մի եկեղեցու արտօնու-
թիւն չի կարող լինել, այլ ամբողջ քրիստոնէութեան: Մենք
էլ քրիստոնեայ ազգ գոլով, իրաւունք ունինք և պարտա-
ւոր ևս ենք զխօսութեան ցուցումներով ս. Գրոց տպագրու-
թիւնն ունենալ, ինչպէս որ արդէն փորձել է հոգեւոյս ներ-
սէս պատրիարքը:

Կնքելով մեր խօսքն, ասում ենք. Մի կողմից ձեռնար-
կելով նախնեաց հարազատ թարգմանութեան համեմատական
տպագրութեանը, որ շատ տարիներ պիտի տեւի, միւս կող-

մից պէտք է հոգեւոյս Պատրիարքի նախաձեռնութեամբ փորձի համար սկսած գործը այժմէն իսկ նորոգ տպագրութիւն թայրագոյն իշխանութեան վերջնական վաւերացմամբ, բայց այնպէս, որ Պոլսոյ տպագրութեան իւրաքանչիւր էջի ստորեւ ծանօթութիւնները մանեն բնագրի համապատասխան տեղերում, իսկ թարգմանութեան այլակերպութիւնները ծանօթութիւններում նշանակուին:

Զոր օրինակ.

Կոստանդ. տպագրածը.

2 Նա պատասխանի ետ և ա-
4 սէ. 1 Ազգ չար և շնացող
նշան խնդրէ

Նոր տպագրուելիք.

2 Նա պատասխանի ետ և
ասէ. 1. Յորժամ երեկոյ լինի,
ասէք թէ Զեր լինելոց է, քան-
3 ղի կարմրացան երկինք. Եւ
ընդ այդս՝ Այսօր ձմեռն, քան-
զի կարմրացան խոժոռեցան
երկինք. զերեսս երկնից գի-
տէք քննել, և զնշանս ժա-
4 մանակաց չկարեցէք: Ազգ
չար և շնացող նշան խնդրէ ...

4. Բազումք յաւելուն: Յորժամ երեկոյ լինի, ասէք թէ Զեր լինելոց է, քանզի կարմրացան երկինք. (3) Եւ ընդ այդս՝ Այսօր ձմեռն, քանզի կարմրացան խոժոռեցան երկինք. զերեսս երկնից գիտէք քննել, և զնշանս ժամանակաց չկարեցէք:

4. Յովնան պակասէ:

Միայն այս եղանակով մենք կուենանք կարճ ժամանակից յետոյ մեր պէտքերի համեմատ ս. Գրոց նորոգ տպագրութիւնը. ժամանակին, Աստուծով, կուենանք նաև նախնեաց ճշգրիտ թարգմանութիւնը, որ ոչ նուազ կարեւոր է:

Ս. Մ.

